*Արիստոտէլին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զհին և զնոր կտակարանացն, աստուածեղէն տառիցն Հ և Բ գրոց և Ծ նուրբ գրոց, դժուարիմաց և խրթին բառիք ծածկեալ աստուածազարդ և ուղղափառ սուրբ վարդապետաց։ Եւ զԾԱ վիպասական պատմագրաց ի բերան առեալ՝ պատմէր մարդկան զտիւ և զգիշեր, յանձանձիր ուսուցանէր և լուսաւորէր զամենայն մարդ, զհաւատացեալ և զանհաւատ, զբարի և զչար։ Եւ ջանայր զամենեսեան ի գիտութիւն ճշմարտութեան աստուածային աւրինացն ածել և նմանիլ Աստուծոյ բարեաւն և գիտականաւն և կատարելեաւն։ Զի սա էր կատարեալ իմաստասէր ըստ Պղատոնին, որ ասէ. իմաստասէր կոչեմ ես ոչ զըքնագէտս և ոչ զայն, որ կարողագոյն բազում ինչ առնուլ ի բերան, այլ զայն, որ անբիծ և անաղտ վարս ստացեալ ունին յինքեանս*։ Եւ վարդապետս մեր ունէր զամենայն յինքն ունակացեալ աստուածային և մարդկային առաքինութեամբ զարդարեալ։ Հաւատով ուղղափառ, յուսով հաստատուն, սիրով կատարեալ, խոնարհութեամբ, արիութեամբ, ողջախոհութեամբ, արդարութեամբ քաղաքավարեալ ի մանկութենէ մինչև ի խորին ծերութեանն. երևեալ իբրև զառա-*

* Դաւիթ անյաղթ. Սահմ. իմաստ. Վենետիկ, 1835, եր. 128

1) Ա. Պերիարմենասն Դ. պերիարմինասն. Ե. պերիարմէնասն Ա. յաշխարհացն Դ. աշխարհացըն Դ. եւ առաք...

2) Ա. չ. եւ զհին

3) Դ. տառից Ա. դժուարյիմաց

4) Բ. ուղափառ

5) Ա. զ՟ածավիպական Բ. զծ՟այ. վիպասական

6) Բ. յանձանցիր 7) Ե. չ. զամենայն

9) Ա. յ՟ծային օրինացն Ե. ա՟ծաին. Բ. յօրինացն Գ. յաւրինացն Ա. չ. Աստուծոյ

10) Բ. կ՟տրլաւն ԱԲ. զի սայ է Դ. ըստ իմաստասիրին որ ասէ. իմաստասէրն նման է ա՟յ բարեաւն եւ գիտնականաւն եւ կատարելեաւն։ Զի սա էր...

11) Ա. յիմաստասէր ԲԳ իմաստնասէր Ե. իմաստունասէր

12) Ա. կարողագոյն են ԴԵ. կարողգոյն

13) ԱԴ. անախտ 14) Բ. ինքեանս. Ա. չ. մեր

15) Բ. ինքն. ԳԴԵ. ի յինքն Բ. ունկ՟ցլ Դ. ունակացուցեալ Ե. ա՟ծային

19) Ա. քաղաքավար մանկութեամբն Բ. քաղաքավար մա կութեանն Գ. քաղաքավարեալ մանկութենէ Ե. քաղաքավարի մանկութենէ

(61Բ. ծերութ՟ե Դ. մինչ.. ծերութ՟ե